

«Համիդիէ», «Աբդ-իւլ Միջիդ». այդ թիւը Եւրոպայի և Ամերիկայի խոշոր գործարանների շնորհիւ կարող է և բազմապատկուել. այն ժամանակ գուցէ այնքան էլ սարսափելի չըլինի այս կամ այն պետութեան ծովային ցոյցը թիւրքական շրջերում... Մակեդոնիայի և Թիւրքիայի ասիական նահանգների քրիստոնեաներին արծաթով միշտ պատրաստ են վաճառել ևրոպական վաճառականները, «քրիստոնէաբար» հետեւելով Աւետարանի մէջ նկարագրած Յուդայի օրինակին...

Լ. Ս.

Հոկտ. 9

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

«Մուրճ»-ի 8 Նում («Բաղմամլէպ»-ից վերցնելով) հրատարակել էինք պ. Բագ. Խալաթեանի դէմ ուղղուած պր-լադիատի մի մեղադրանք և ցանկութիւն յայտնել միաժամանակ շուտով տեսնել հերքումը Պ. Բ. Խալաթեանի այդ հերքումին է, որ այժմ լոյս է տեսել «Հանդէս ամսօրեայ»-ի օգոստ.-սեպտ. միացեալ համարներում *), որ ներկայացնում ենք մեր ընթերցողների ուշադրութեանը:

«Կարգալով «Բաղմամլէպ»-ի 1904 թ. օգոստոսի համարում Սկսնակ բանասիրի իմ դէմ ուղղած թղթակցութիւնն, որով պարոնը՝ առանց դադարի րոնենալու թէ՛ արարելէն և թէ՛ գերմաներէն լեզուների մասին՝ թոյլ է տալիս իրան պնդել, թէ իմ «Արարացի մասնագիրը Հայաստանի մասին» տակաւին Հաւաքած գործս լուի «Թարգմանութիւն մ'է այժմ Գ. Պոլսյ մէջ ապրող Տօբթոր Մորթմանի հօր՝ Ժանօթ արեւելտ, հայադէտ (?) և սեպագրադէտ (?) աօթթոր Մորթմանայ գերմաներէն լեզուու հրատա-

րակած մի գործէն» (գործի անունը պարոնը սակայն չի յիշէ !). պատիւ ունիմ յայտարարելու, որ վերոյիշեալ դր. Մորթման քաղմանած չէ Բեյազօրի (որ երկիւս ա. մասի նիւթն կը կազմէ և իմ քրտնաշան աշխատանաց արդիւնքն կը հանդիսանայ), այլ կեղծ վակիյիի (*Pseudo al Valakidi*) պատմական նշանակութիւնից զուրկ գործի ներուրի ձեռքով թարգմանութեանն (որի համառօտ ըովանդակութիւնն եռ նոյնիսկ առաջ եմ բերել «յառաջաբանիս» մէջ և յիշել նորա գերմաներէն թարգմանութեան վերնադիրը) կցել է Ցաւեղուածք և Մեկնութիւնք: Այս մէջ բերելով յիշեալ գերմաներէն գործի ամբողջ վերնադիրը պ. Բ. Խալաթեան շարունակում է. «Գերմաներէն կարգալ սովորել շատ օգտաւէտ կը լինէր քաջ քննադատին:

Չգիտեմ ինչի՞ վրադրել Սկսնակի այս «տափակ» զրպարտութիւն արդեօք նորա ցանկութեանն (պարոնը կ'երեկ հանդիստ չունի նրա թոյլ գործի վրայ «Հանդիսում» գրած քննադատութիւնիցս յետոյ)՝ փաստեր խաղախել իմ դէմ, թէ նորա ճշիտութեանը: Ով ինչպէս կամի:

*) Այդ համարը բաւական ուշ հասու մեզ:

Անհիմն է նաև պ. բանասիրի միւս համարձակ նկատողութիւնն, թէ ես «արարելէն տեղեակ չեմ», բանի որ ես տարիններէ ի վեր *Sachau* և *Bartli* համբաւոր արարադէտ ուսուցչապետաց աշակերտն լինելու պատիւն ունեցած եմ: Պարտնր սխալ դուռ է բախել:

Ցանկալի էր, որ նման յանդուղն «նկատողութիւնք» լըջիւ կշռուած և հիմնաւորուած լինէին, նախքան մեր մամուլի էջերը մրտենին:

Մենք կը պահանջենք զբ. Տաղաւարեանից՝ քաջութիւն ունենալ փաստով ապացուցամուր մեզ իւր՝ միայն իրան և իւրայիններին յատուկ՝ զբարարութեան երկու կէտերը եւ, հակառակ դէպքում նա երբէք չի սրբէ իւր ճակատից այն շանունն, որին նա արժանացել է շնորհիւ իւր... կեղծիքի: Բ. Խալաթեան:

«Այս հերքումը ըստ երևոյթին վճռական է. մնում է միայն՝ զարմանալ ու ցաւել, որ զորտոր՝ Տաղաւարեանի պէս արդէն բաւական զբաղան անուն ունեցող մարդ հրապարակ է դալիս այդքան է ծանր մեղադրանքներով ուրիշի անձի՝ դէմ, առանց կըշռելու բարոյական պատասխանատուութեան բոլոր արժէքը:

«Բազմավէպ». սեպ.-հոկտ.՝ Վենետիկեան թերթի յիշեալ համարում ի միջի այլոց գտնում ենք մի փոքրիկ դատողութիւն ու. Էջմիածնի «Արարատ» ամսագրի և նրա նոր խմբագիր Մուրադեան վարդապետի մասին: Ատրըպատականի «այտնի» տոռնորդը մի յօդուած է գրել «Արարատ»-ում, որ միանգամայն բաւական է համարուել «Բազմավէպ»-ի ճաշակաւոր քըննադատին հասցնելու երկու ուշագրաւ եղբակացութեան. ա) «կամաց-կամաց նոր խմբագրութիւնը անտարակոյս մոռցնել կուտայ նախորդին փառայնդ անճարակութիւնը», և բ) «խմբագիրը ինքնին կերեկ ազատամիտ խեղճի սիրահար»: Առհասարակ մեզ չեն դարձնում «Բազմավէպ»-ի գրական քըն-

նադատական այս շափազանցութիւնները, մինք վաղուց ենք սովորել այդ բոլորին: Դեռ նորերս այդ թերթը զբաղէտների մէջ յանկարծ երևան հանեց մի տաղանդաւոր բանաստեղծ՝ և այն... Գր. Բալասանին: Դրա փոխարէն իսկապէս տաղանդաւոր և յայտնի բանաստեղծ Յով. Թումանեանից բան չհասկացաւ և մի ուրիշ Թումանեանի առաջինիս եղբայր համարեց և... հանձարեղ... Գրական քննադատութիւն ասելով «Բազմավէպ»-ը մեծամասամբ հասկանում է խնկարկութիւն, դժպտանք և շողոքորթութիւն, մանաւանդ երբ խօսքը ականի կամ պակաս յայտնի զբաղէտների մասին է: Եւ ինչ զովասանքներ...

Սակայն հանձարը, տաղանդը, ազատամտութիւնը լոկ բառեր չեն, որոնք «Բազմավէպ»-ի թեկերի վրայ փրկուելով՝ Վենետիկից տարածուին և հայ գրականութիւնը ողողին: Մենք ականի կ'ասենք. այդ անօգուտ զովասանքները միայն բազմացնում են գրական սանձարձակութիւններն ու աներեսութիւնը:

Եւ յետոյ՝ այդ ազատամտութիւնը, որ քարոզում է «Բազմավէպ»-ը. ինչու համար բառերը խեղաթիւրել, նրանք պէտք է միայն մի հատիկ նշանակութիւն ունենան: «Մուրադեան վարդապետը» կ'երեկ ազատամիտ խեղճի սիրահար. միթէ... Թերթում ենք «Բազմավէպը» և միւս երեսին կարդում ենք՝ «վանտալներու լէզեններ», «նոր վանտալներու ոճիւրներ», «անդթութիւնը խելագարօրէն ի դործ գրին» և այլ այսպիսի ազատամտական զոհարներ հմ հասցէին... միշտ քաղցած, բայց միշտ տքնող, տառապող, արիւնքրտիւնք թափող խեղճուկրակ մարդկանց, որոնց շահագործում են ամենքը...

«Արեւիկեան Մամուլի» մէջ կարդում ենք. «Դոհուլթեամբ կ'իմանանք Պոլսոյ թերթերէն թէ քաղաքիս ծանօթ և պատուաւոր վաճառականներէն Քերութէ Էֆ. Թօփալեան, որ Գլիկիոյ Ս. Գաթողիկոսին քաղաքս ժամանման

օրը շողնաւին մէջ առանձին այցելութիւն տուաւ Ն. Ս. Օծութեան, յանուն Թօփալեան եղբայր խոստացեր է տարեկան 120 ոսկի նպաստ մը ընել Գիրիկոյ թեմերուն կարօտ դպրոցներուն: Ս. Գաթողիկոսը խիստ դո՛ւ մընալով՝ Բերորէ էֆ. -ի այս ինքնաբերական քարոսարարութենէն, օրհներ է Թօփալեան եղբայրները:

«Русская Мысль», սեպտեմբեր. — Ռուս ամսագրի այս համարում յայտնի բնադատ Սկարիշևսկի մի հետաքրքրական յօդուած ունի՝ «Այլատեսութիւնները մեր ժամանակակից գրականութեան մէջ» (Дегенераты в нашей современной беллетристике) վերնագրով: Ժամանակակից գեղարուեստական ուսուցողներէն նա մասնաւորապէս կանգ է առնում Լէօնիդ Անդրէեի վրայ:

Այս երիտասարդ հեղինակը մի մընալով և անողորմ տաղանդ է: Նրա բոլոր տիպերը մարմնացնում են ախտեր, որոնք՝ ընթերցողի մէջ յարուցանում են սոսկումի գզացումներ: Եւ, ինչ որ բնորոշ է Անդրէեի համար, նա կարողանում է նողկանքը զօրացնել և հույզնել սոսկումի աստիճանին: Լ. Անդրէեը արդէն շատ է խօսեցրել իր մասին. սմանք նրան համարեցին պօրնուգրաֆ, որ շահագործում է ժամանակակից հասարակութեան ուժեղ ցնցումների պահանջը. ուրիշները գտան, որ Լ. Անդրէեը խզը ժամանակի մարդ է. այժմ Սկարիշևսկի գալիս է ճիշտ դիտադնոստիկը դնելու. նրա կարծիքով Անդրէեը միայն շարունակում է իրանից առաջ եղած գրողների սկսածը, Գոնշարով, Գոռոսեւսկի, Գարշին, Ուսպենսկի, մինչև իսկ Տուրգենև անցեալներից, և Չեխով, Գոր'կի, Պոռապենկո նորերից տուել են բազմաթիւ հիւանդ տիպեր: «Երբ կեանքի մէջ աւելի և աւելի բազմանում են ամենատեսակ այլատեսութիւնները—նկատում է իրական կերպով Սկարիշևսկի,—գեղարուեստի մէջ էլ, որ կեանքի հայելին է, պէտք է գերակշռող հանդիսանան այ-

լատեսութիւնների տիպերը»: Ռուս կեանքըն ինքն արդէն լիփ-լիցուն է այլատեսութեամբ տիպերով, հոգեկան հիւանդներով, ախտաւորներով, որոնց զգացմունքների և մտքերի անորմալ՝ զարգացումը, կամադրկութիւնը, կատարեալ ապատիւն հրէշաւոր կոնարատ են կազմում նրանց ֆիզիկապէս առողջ օրգանիզմների հետ:

Սրանցից է ընտրում Անդրէեին իր տիպերը, և նա մեղաւոր չէ, որ իր պատմութիւնները սոսկում են յարուցանում: Ասել է, որ հասարակութիւնն ինքը իր ծոցում թունաւոր օձերի պէս սնել է սոսկալի տիպեր:

Ահա Անդրէեի մալլ ու անողորմ տաղանդին արդարացուցիչ վճիռ:

Սկարիշևսկի թուուցել տեսութեան ենթարկելով Անդրէեի միջանի մանր պատմութիւնները՝ երկարօրէն կանգ է առնում նրա վերջին երկի՝ „Жизнь Василия Фивейского“ պատմութիւն վրայ, որպէս ամենայնողումը և ամենաբնորոշն ինչպէս հասարակական հոգեբանութեան նոյնպէս և հեղինակի տաղանդի տեսակէտից:

Հերոսը մի գիւղական բահնայ է, որի վրայ կարծես ծանրացած է միշտը ճակատագիր և անխնայ կերպով հարուածներ է թափում: «Այս շտը ճակատագրից,—ասում է Սկարիշևսկի,—ոչ այլ ինչ է, եթէ ոչ հայր Վասիլիի և իր մարդը ընտանիքի այլատեսութիւնը: Հէնց որտ մէջ է կայանում հայր Վասիլիի և իրենտանիքի կրած բոլոր անյոշուղութիւններն ու տառապանքները, նրանց դիւին ծանրացած անէծքը»: Ծխականներից ոչոր նրան չի սերում, եկեղեցական պաշտամունքը հայր Վասիլի վատ է կատարում, ձայնը չոր է, կովման նրանից լսոյս են տալիս, փաղնում են ամենքը: Մի որդի ունի, որ խեղդւում է գետակում: Այս հարուածը տանել չեն կարողանում քահանան և իր կինը, որովհետեւ երկուսով էլ այլատեսութիւն են: Վերջինս սկսում է այնուհետեւ փախուել տանը և լամել, լամել անվերջ: Նա միշտ հար-

բաժ է: Սկսում է դժբախտութիւնների շարքը. այս հարընցող, կիսախելազար կինը «իբ տան փակ լուսամուտների հիւանդոտ խաւարի ալկոհոլով ծնուած հրէշաւոր երազների մէջ... խնթ ցանկութիւն է զգում նոր տղայ ունենալ»: Եւ քահանան ստիպուած է զիջել. այդպիսի պայմաններում կատարուած յղացումից ծնում է մի հրէշ, մի այլասեւեռուած մանուկ: «Խենթութեամբ յղացուած՝ նա աշխարհ եկաւ խենթ»: Յոյսերն ի դեռեւ ելան. տէրտէրաւոր կինն առաջնայ պէս սկսեց հարբել. նա խմում էր մինչեւ բանականութիւնը կորցնելը: Առաջնայ պէս նա աշխատում էր իր խախտած երեւակայութեան մէջ կենդանացնել մեռած գաւազի պտուկերը, բայց նրա փոխարէն աչքի առաջ ցցւում էր իդէօտ դաւալի սարսափելի, անշարժ դէմքը: Այս պտուկերի պաղծառած ցան այնպիսի չափեր է ընդունում, որ տէրտէրակներ խելագարում է իսպառ և սկսում է իր շարքը պատռել, զուլը պատռելն դարկել, ի վերջոյ մի զիպուածական հրդեհից մեռնում է խրճթի բացերի մէջ:

Դեռ այդ հրդեհից և կնոջ մահուանից առաջ էլ հայ Վասիլի կրքեմն ցոյց էր տալիս խելագարութեան ակնյայտնի նշաններ: Այսպէս՝ երբ առաջին անգամ տեսնում է տէրտէրակնոջը հարած, նա կծկում է և ծիծաղում երկար անմիտ ծիծաղով՝ շփելով շոր, տաք ձեռները: Յետոյ նա մինչև մինակ զնում է դաշտը և ձեռները երկինք տարածած՝ բացադանշում.

— Ես հաւատում եմ:

Սրանից էլ աւելի խենթութիւն ցոյց տուեց քահանան, երբ խոստովանեցնում էր մի մուրացիկի, որը հաւատացնում էր, թէ տաք տաքի առաջ անտառում բռնաբարել է մի փոքրահասակ աղջկայ և յետոյ տուել է ներան երեք կոպէկ, բայց յետոյ ափսոսելով իր փողիքին՝ նա սպանել է իր զոհին և թաղել: Նա շատ էր պատմել, ուրիշներին էլ, ոչոք չէր հաւատացել բայց հայր Վասիլի հաւատաց, նրան

յանդիմանեց, սարսափեցրեց դժոխքի շարշարաններով և յետոյ յանկարծ փոխուելով՝ առաց.

— Ասիւր, դժոխքից մի վախի՛ր, ճշմարիտ եմ ասում. ես էլ եմ մարդ սպանել, մի փոքրիկ աղջիկ, դժոխք չես զնալ, այլ արքայութիւն, սրբերի և նահատակների հետ: Ամենից էլ բարձր, առում եմ քեզ:

Հրէշ երեխայի ծնունդը, տան հըրդեհը և կնոջ մահը զլիեց նրա հոգեկան հիւանդութիւնը: Այս բոլոր հաւուածների մէջ նա տեսաւ երկնքի կամբը, որ նրան նոր ճանապարհի համար էր ընտրում: Եւ նա կրկնում էր. «Տէր, կը բաւն արդեօք իմ թոյլ ոյժերը»: Պատասխանը լինում էր նրա հոգին յուսուորող բոցը, որպէս մի նոր արեղակ. «Ես ընտրուած է: Վերջտապէս վրայ եկաւ մի օր, երբ հայր Վասիլիի հիւանդութիւնը հասաւ զագաթնակէտին: Ամբոս սկիզբն էր, երբ ինչպէս յայտնի է, հոգեկան հիւանդութիւններն առանձնապէս զարգանում են: Տօթ էր, փոթորիկ էր, պատրաստուած: Հոգեզալստեան տօնն էր. եկեղեցում բալմութիւնը մեծ էր, և խեղդոց էր. այդ օրը թաղում էին փուածքի տակ մնացած Սիմէօն անունով մի զիւղացու: Ահա այդ օրը հայր Վասիլի կրեակայեց, թէ հասել է իր մեծ դործի ժամը: Եւ ահա երբ վերջացաւ պատարագը, նա եկաւ, դադաղի առաջ կանգնեց և ձեռները երկինք ուղղած՝ երեք անգամ կանչեց. «Սիմէօն, քեզ եմ տեսն, վեր կաց». ժողովուրդը սարսափով բռնուած՝ դուրս փախաւ եկեղեցուց, թողնելով հայր Վասիլիին դիակի առաջ մնալի: Նա ձեռները ցած թողեց և երկար ժամանակ սպասում էր հրաշքին: Հրաշքը չկար: Եւ նա այսպէս լուսեց դիակի առաջ.

— Դու ուղում ես ինձ խորմի... Ապա ինչի՞ համար էի հաւատում այսքան ժամանակ: Ինչի՞ համար Դու ինձ տուիր սէր դէպի մարդիկ և զթութիւն, միթէ ինձ հեղինու համար: Ինչե՞ւ ապա իմ ամբողջ կեանքում ինձ զերե, սարուկ սպանեցիք, չլթաներով

այրկած: Ո՛չ ազատ միտք, ո՛չ զգացմունք, ոչ հառաշանք: Բոլորը Քեզ համար, Քեզնով: Միայն Դու Դէ՛, յայտնուիր այժմ, ես սպասում եմ:

Երկար լուսթիւն եկեղեցում:

— 25-ն կամենում, հարցնում է դարձեալ նա մեղմութեամբ և յանկարծ կատաղի ճիշով — Դու պարտական ես, — զոչում է, — կեննք տուր նրան. մոռուր չնիքից և տուր նրան, ես աղաչում եմ:

Այս դառնալով դիակին՝ առնելով թեամբ ու կատաղութիւնով հրամայում է.

— Դու խնդրիր նրան, խնդրիր:

Եւ ցնցելով դիակը՝ կատաղաբար ճշում է.

— Դէ՛, խօսիր, անիծումս միս:

Յետոյ իր խնթութեան մէջ նրան թւում է, թէ դադարի մէջ Սիմէոնը չէ, այլ իղիօտը, իր հըէշ որդին, յետոյ դարձեալ դիակը, ապա կրկին իղիօտը, և այսպէս անվերջ...

Պայթում է փոթորիկը. հայր Վասիլի վերե է նայում, և նրան թւում է, թէ տիեզերքը փլշում է նրա գլխին: Նա դուրս է փախչում եկեղեցուց վայրենի ոռնոցով, դուռը չի գտնում, դարկում է պտտերին, սիւներին, ճրշում է, հառաչում, վերջապէս դուրս է ընկնում: Յետոյ հայր Վասիլիին գրտնում են գիւղից երեք վերստ հեռու մեռած:

Ահա այդ պատմութեան ամենահամառօտ բովանդակութիւնը: «Այս վերին աստիճանի գեղարուեստական դրածի զլխաւոր ոյժը, — առում է Սկարլէսկիլ, — գտնում է ոչ այնքան պատմութեան ընդհանուր ընթացքի. որքան մանրամասնութիւնների հոգեբանական խորը անալիզի. ցնցող տեսարանների մէջ:

Այս բոլորը մարդի մէջ յարուցանում է բացի այն միտքիկ սարսափը, որ մենք զգում ենք հոգեկան հիւանդների տեսնելիս, նաև խորունկ գթութիւն դէպի տառապող գժրախաները, որոնք անօգուտ տեղն են սլաքաբում իրանց գլխին ծանրացած շար բախտի

դէմ: Առանց շափազանցանելու կարելի է ասել, որ դա նոյն զգացմունքն է, ինչ զարթնում է մեր մէջ, երբ տեսնում ենք Լաօկօսնի տանջանքները, կամ Նիօբէի արցունքը:

«Кавказ», №267. — Թիֆլիզի թերթերում տպուած յայտարարութիւնները հաղորդում լին, թէ հոկտեմբերի 6-ին Ռուսաց Վայոքրակ. Աշխարհագր. Ընկերութեան Գովկասեան ձիւղի նիստին կարգացուելու է մի հետաքրքիր դասախօսութիւն «Հիւսիսային Քիւրդիստանի, մասին: Դասախօսողն է շտաբական պիտան Կ. Ն. Սմիրնով, որ այս տարի ամառը շրջել է այդ կողմերում: Գարգալով այդ յայտարարութիւնը՝ մենք մեզ հարցնում էինք, թէ ո՞ւր է գտնուում այդ «Հիւսիսային Քիւրդիստանը», ուր ենք մեզ պ. Սմիրնով ի սէր դիտութեան: Այժմ «Կաւկազ» թերթում հրատարակուած են այդ դասախօսութեան էական մասերը. և ի՞նչ է դուրս գալիս. շտաբական պիտան Սմիրնովի «Հիւսիսային Քիւրդիստանը» այն երկիրն է, ուր գտնուում են Բայաղիտ, Վան, Մուշ, Կարին, Իրիթլիս, Տիգրանակերտ և Սասունի բարձունքները, այնտեղ. ուր փռուած է Վանայ լիճը. ուր բարձրանում է Սիփան սարը: Ուրեմն պ. Սմիրնովին հաճելի է եղել թիւրքա-հայկական զաւառները անուանել «Հիւսիսային Քիւրդիստան»:

Մի երկու տարի առաջ Անգլիայում մի գիրք հրատարակուեց Հայաստանի մասին երկու խոշոր հատորներով և քտրտէղով. մի հսկայական և բարեխիղճ աշխատութիւն, որպիսին միայն անգլիացին դիտէ կատարել, մասնաւոր այն երկրների մասին, որոնց հետ Անգլիան շփման մէջ է: Այդ հոյակապ աշխատութեան վերնագիրն է «Արմենիա» և հեղինակն է անգլիացի Լինչ:

Նոյնպէս ճանապարհորդ է այդ մարդը: Նա զնայել է տեսնելու, թէ ի՞նչ կայ այդ գժրախտ Հայաստանում, որի մասին այնքան խօսում են վերջին տարիները ամբողջ աշխարհում, ու անգլիացի դիտութեան մարդի բա-

բերեղձութեամբ արձանագրել է այն բոլորը, ինչ տեսել է, ինչ որ կայ՝ անց կացնելով իր հմտալից քննադատութեան բովից: Նա էլ Սմիլնովի պէս չժխել է հայկական դաւաճներում, անցել է Վան, Մուշ, Կարին, Սասուն, բայց ուսումնասիրելով այդ երկրների ներկան և անցեալը՝ այնտեղ գտել է միայն հայաստան—Արմենիա:

Տեսնենք այժմ, թէ ինչ է տեսել նոյն հայաստանում կամ «Հիւսիսային Քիւրդիստանում» Սմիլնովը: Արեւելագէտ ճանապարհորդը կարողացել է տեսնել, որ Վանայ լիճը շրջապատուած է մօայլ ժայռերով, որ նրա մօտ բարձրանում է Սիփան սարը, որ Մուշը գտնուում է մի՛ դեղանկար ձորում, ունի 3 հազար տուն բնակիչ, Սասունը մի լեռնոտ դաւառ է, և նրա հայ բնակիչներին թիւրք կառավարութիւնը ցած է բերել՝ նրանց տեղ Գովկասից դնալ, ցած չէրբէզներ բնակեցնելու համար, այնուհետեւ Սմիլնովը իմացել է, որ քիւրդերը բաժանուում են երկու մեծ ցեղի—Ջիլ (երեւի զիլանցի) և Միլ, և որ այդ քիւրդերից սուլթանը կազմակերպել է 55 անկախ զինուոր համարիչ անունով, —բաներ, որոնք ամենքին յայտնի են:

Բայց մենք դեռ չտապցինք պ.

Սմիլնովի հետազոտութեան ամենանշանաւոր արդիւնքը, նրա արած ամենահետաքրքիր յայտնութիւնը.— Թիւրքիայի ամենակուլտուրական տարրն են Գովկասից Թիւրքիա անցած չէրբէզները!.. Եւ պէտք է զարմանալ, որ մենք կովկասցիներըս այնքան կոյր ենք եղել, որ այդ երեւի կուլտուրական տարրը չենք տեսել մեր կողքին Գովկասեան լեռներում, չենք շտապել ընդօրինակել նրա արիւնդուտ բարքերը, նրա նիստուկացը, սեփականութեան կարգի նրա հասկացողութիւնները, չենք շտապել տուլ ների հոյակապ քաղաքակրթութիւնը իւրացնել. պէտք եղաւ, որ խեղճ Սմիլնովը նեղութիւն կրել, դնայ Թիւրքիա և վերադառնայ այդ մեղ տնելու համար:

Եւ ինչ որ աւելի տարօրինակ է, այն է, թէ ինչ մենք կովկասցիներս մինչև այժմ չենք հասկացել, հրաշալի կերպով բմբռնել է թիւրք կառավարութիւնը. նա նախ լայն կերպով բացել է իր դռները այդ «կուլտուրական տարրի» առաջ՝ փակելով «ոչ կուլտուրական» հայերի առաջ և յետոյ՝ հայկական դաւաճները շտապում է բնակեցնել չէրբէզներով՝ երեւի իր երկիրը շուտով քաղաքակրթելու համար...

Վ Ր Ի Պ Ա Կ

Այս Ահ-ում

Շրջա	տող	սխալ	ուղիղ
67	16 վ.	Պարգար	Գարգար
70	23 վ.	իբ	իբանց
75	10 վ.	լաղերից	լէզզիներից